ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար ուղղահայաց շերտավարագույրների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/41» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «20» դեկտեմբերի, 2019թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Արթուր Եղիազարյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետ,

հանձնաժողովի անդամներ՝

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

Էդգար Տոնականյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

Գրիգոր Գաբրիելյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի ղեկավար,

Լիլիթ Հովհաննիսյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար

հանձնաժողովի քարտուղար՝

Օֆելյա Ասատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ)

1. Տեղեկատվություն՝ Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) ներկայացված հարցման մասին Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության, ինչպես նաև առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության գնահատման վերաբերյալ.

1.1 «Լեվել-Էս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և հրավերով սահմանված կարգով ներկայացրել է «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/41» ծածկագրով գնանշման հարցման հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ բաժնով և Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ. պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը:

1.2 Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) ներկայացված հարցման մասին Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության գնահատման արդյունքում արձանագրվել է հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունը.

-«Լեվել-Էս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ (բոլոր չափաբաժինների մասով), սակայն «Լեվել-Էս» ՍՊԸ-ի 18.12.2019թ.-ի գրությամբ կից ներկայացվել է թիվ 000244 բյուջետային փոխանցման կտրոն, ըստ որի նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորությունը վճարվել է մինչև գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի օրը:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով՝ -«Լեվել-Էս» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքը և ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերը

գնահատել բավարար. հաստատել հայտերի գնահատման արդյունքները և բոլոր չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել «Լեվել-Էս» ՍՊԸ-ին,

2. հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է),

3. գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր.

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Եղիազարյան

Անդամներ՝

_____ Կարեն Մելքոնյան

_____ Էդգար Տոնականյան

_____ Գրիգոր Գաբրիելյան

_____ Լիլիթ Հովհաննիսյան

Քարտուղար՝

_____ Օֆելյա Ասատրյան